

ԳՐԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

(ԳՐԱԿԱՆ-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ)

(C...r...-n...{...-l...-n...)

Պոէմաներից Անուշը մեր քնարական
բանաստեղծութեան գողտրիկ գոհարնե-
րից մէկն է եւ միաժամանակ հեղինակի
պուեմաների զլուխ-գործոցը։ Նիմթը՝ զիւ-
ղի կեանքն է, զիւղական աշխարհը։ Այդ
աշխարհը Լոռին է իր Դսեղ զիւղով եւ Դե-
քեղ զետով։ Այնտեղ ցոլանում է գաւառի
զիւղացիութեան կեանքը, իր ընորոց զծե-
րով։ Գիւղական հասարակութեան բար-
քերը, նիստ ու կացը, հաւատալիքներն ու
նախապաշտումները, խոհերն ու բարյա-
կան հասկացողութիւնները, բոլորն էլ ան-
դրադառնում են “Անուշի”, մէջ։ Պոէմայի
մէջ հանդէս են գալիս եւ զիւղական անձ-
նաւորութիւնները — երիտասարդ, կին,
հարս, աղջիկ, տղամարդ, քահանայ, տա-
նուտէր, իրենց տեսքով եւ կերպարանքով։
Պոէմայի զլխաւոր արժանաւորութիւննե-
րից մէկն էլ նրա ընութեան գեղեցիկ նկա-
րագրութիւնների մէջ է։ Այնտեղ Լոռու
ընութիւնը կենդանի կանգնած է ծեր ա-
ռաջ, իր բոլոր վսեմութեամբ։ Վիթիարի
ու վէս սարերը, խորոնկ ծորերը, կանա-
չազարդ հովիտներն ու դաշտերը, քչթշան
աղքիւններն ու վտակները, աստղազարդ
երկինքը, վերջալոյսը, արշալոյսը — բոլորն
էլ գծուած են նկարչի վարպետ վրձինով։
Դուք բանաստեղծի հետ սլանում էք այդ
գեղեցիկ աշխարհը, ծանօթանում էք նա
հապետական մի ամքողջ ժողովրդի կեան
քի հետ, լսում էք զիւղացիների խօսակ
ցութիւնն ու զրոյցը, ջանգիւրումներն ու
քայաթիւնները, մասնակցում էք նրանց համ

բարձմանը, գոտեմարտութեանը, հարսա-
նիքին եւ զիւղացիների հետ միասին ուրա-
խանում, ինդում, խաղում, տիւրում՝ ու
լալիս: Ահա “Անուշի,, արժանիքը:

Պոէման սկսում է մի հակիրք նախեր-
գանքով: Համբարձման գիշեր է: Փէրի-
ները կէս զիշերին հաւաքում են սարի
զլիսին եւ ողբում Անուշի եւ Սարօյի դժ-
ռահտ սէրը:

Այսուհետեւ չքնաղ հայրենիքի կարո-
տը քաշում է բանաստեղծին եւ նրա երե-
սակայութիւնը թռչում է դէպի այն վիճ-
իարի սարերը, ուր հովիլ Սարօն կանչում
է իր սիրած Անուշին.

“Աման, Էրեցիք սիրտըս քո սիրով,
Ոտըս կապեցիք թել-թել մազերով,
Էլ չեմ դիմանալ, կը փախցնեմ զօռով,
Այ սարի աղջիկ,
Այ սիրոն աղջիկ,
Այ դու կարմրաթուշ
Թուխամազ Անուշ:”

Հառւմ է Անուշը եւ չի կարողանում
այլ եւս հանգիստ նստել վրանի ներքոյ:
Նա կարօտագին տենչում է թոշել Սա-
րօյի մօտ, բաց անել նրա առջեւ իր սիր-
տը եւ սիրել ու սիրուել: Բայց գիւղերում
կուսական սիրոտն ու հոգին շղթայուած են
նահապետական աւանդութիւններով: Այդ
աւանդական կանոնի համաձայն աղջիկը
պիտի տանը նստի—մարդու մէջ չերեւայ,
թէ չէ

“Տեսնողն էլ կասի՝ ի՞նչ աղջիկ է սա,
չպար մարդի մօտ կ'երթայ, կը խօսայ:,,

Սիրոյ կրակը, սակայն, փշրում է
աւանդական կաշկանդիչ շղթան: Անուշը
ինդրում է մօրից, որ թողնի իրեն սարի
լանջը գնալու, ծաղիկներ քաղելու եւ ջան-
գիւլում ասելու:

“Նանի՞ ջան, նանի՞, կուժը թող առնեմ, Աղքիւրը գնամ աղջիկների հետ...”

Անուշ՝ կուժն առած, ընկերուհիների հետ աղքիւրն է իջնում ջրի: Ընկերուհիները վաղուց վերադարձել են, “ամպերն էլ սարերն են պատել,,, բայց դեռ Անուշը չկայ: Խնչու ուշացաւ. ի՞նչ կ'ասեն լսողները, աղաթի ճայնը յանկարծ կասկած է զարթեցնում մօր սրտի մէջ եւնա բարձրանում է սարի գլխին եւ կանչում Անուշին: Բայց նա Սարօյի գրկումն է: Խընդրում է նա Սարօյին, որ թողուի իրեն եւ գանգատուում է, որ նա շուտով չեկաւ, թէ նա իր չափ չի սիրու եւ մենակ ինքն է տանջուում: Հնչում է նորից մօր ճայնը: Անուշ մազերն անկարգ, կուժը դատարկ, դառնում է վրանի տակ:

Համբարձում է: Գիւղի ջահէլ աղջիկները կժերն առած սարերն են իջնում, ջանգիւլում երգում եւ վիճակ հանում: Անուշին ընկնում է սեւ վիճակ: Ընկերուհիները միսիթարում են, սիրտտալիս, բայց նա հաւատացած է, որ բախտ չունի, որովհետեւ դեռ մանուկ հասակում իրեն անիծում է ողորմութիւն խնդրող մի դարպից: Գիւղական նախապաշարումը յուզում է, ալեկոծում Անուշի հոգեկան աշխարհը:

Հարսանիք է գիւղում: Պարից յետոյ բացուում է լայն հրապարակը: Գոտեմարտում են Սարօն եւ Անուշի եղբայրը՝ զառնարած Մօսին: “Հնուց աղաթ”, կայ, որ ամբոխի առաջ իգիթը գետին չի զարկել ընկեր իգիթին: Բայց Սարօն տեսնում է Անուշին, մոռանում աղաթը եւ Մօսուն գետին զարկում: Եւ ահա սկսում է դրամատիկական ողբերգութիւնը: Այդ օրուանից Մօսին թշնամանում է Սարօյի հետ: Նա սպառնում է քրոջը եւ խանչալի ծայրով խօսք առնում, որ չսիրէ “Նամարդին,,: Խնչու խորտակում է Մօսին քրոջ մաքուր սէրը: Խնչու թշնամանում է նա Սարօյի հետ: Որովհետեւ “Հնուց աղաթը,, անպատուուած էր, արհամարհուած էր մի

“Նամարդի,, ծեռքով: Պէտք էր վրէժ լուծել նամարդից, պէտք էր “աղաթը,, վերականգնիլ: Եւ “աղաթը,, բաժանում է սիրող սրտերին: Բայց Սարօն էլ սիրտ ունի: Նա մի գիշեր փախցնում է Անուշին: Մօսին ընկնում է սար ու ծոր, թափառում անտառներում, ծմակներում, որպէս զի երկ սին էլ գնդակախորով անէ: Ի՞նչ ուիրը է բռնում գիւղի ամբոխը այդ յուզիչ տեսարանի հանդէպ: Ի՞նչպէս է համարձակուում փախչելու իր հօր տանից, ի՞նչպէս է յանդգնում անարգելու գիւղական աւանդական սրբութիւնը, աղաղակում է եւ վըրդովում գիւղի ժողովուրդը: Խսկ Սարօյի մայրը գարի է զցել տալիս, չար, սեւ երազներ է տեսնում: Յուզիչ եւ սիրտ ճմլոյ մի պատկեր է այդ երազը—մի մութ ծորի մէջ Սարօյի ոչխարները լեզու առած խաղ էին կանչում, խսկ պառաւ նանն էլ անլուս բռնած պար էր գալիս նրանց առաջ...

Անուշը տուն է վերադառնում, որպէս զի վերջ տայ սրտառուչ դրամային: Բայց նրա վերադարձը առաջ է բերում յուզիչ մի տրագեդիա: Ալեւոր հայրը փրփրած թքում է, անիծում աղջկան եւ տանից դուրս արտաքսում: Խնչու հայրը նախատում է, անիծում Անուշին: Խնչու անուանում է նրան “Լիրը,, “անզգամ,, “սեւերես,,: Որպէս զի “աղաթի օրէնքը,, յարգէ, որպէս զի տան “պատիւր,, բարձր պահէ: Բայց դուք Անուշին չէք դատապարտում, դուք նրան հասկանում էք: Գիտէք, որ նա անմեղ է, նա մաքուր է: Զգում էք, որ նա իր մէջ մի ազնիւ սիրտ է կրում: Դուք ապրում էք նրա տանջանքներով եւ խորապէս, անկեղծօրէն յուզուում տեսնելով նրա հոգեկան տանջանքները:

Գալիս է գիւղի քահանան, եթէ Անուշն իր կամքով է փախել պիտի պսակէ նրան: Բայց յանկարծ պատկերը փոխուում է: Բարձրանում է սուզ ու շիւան: Մօսին սարում սպանել է Սարօյին: Դուք սարսափում էք այդ լրից եւ խորապէս յու-

զուում տեսնելով Սարօյի պառաւ մօրը, որ ընկած մինուճար որդու դիակի վրայ, մազերը փետտելով լալիս է եւ հառաշում։ Տարաբախտ մօր կակիծն ու հառաշանքը արցունքներ են իլում եւ ձեր աչքերեց։

Բայց ի՞նչ վերաբերմունք է ցոյց տալիս գիւղի ամբոխը այդ զազրելի մարդասպանութեան դէմ։ Նա անտարբեր դիտում է։ Նա չի բողոքում սարսափելի աղէտի դէմ, չի դատապարտում ոճրագործին, որովհետեւ զոհը հրէշաւոր “աղաթի”, զոհն է։ Չեն բողոքում նոյն իսկ տարաբախտ զոհի ընկերները, որովհետեւ նրանք էլ ենթակայ են “աղաթի”, կոյր իշխանութեան։ Մի մոայլ փոս են փորում նրանք զետի եզերքին եւ հողին յանձնում իզիթ հովուին։ Դրանով էլ նրանք կատարում են իրենց ընկերական-բարոյական պարտականութիւնը եւ հանգստացնում իրենց եկիցնը։

Գարուն է։ Սարեր ու ձորեր կանաչ են հագել, պճնուել են երփներանգ ծաղիկներով, հրճուում են ամենքը։ Միայն մի աղջիկ Դեբեդ զետի եզերքին ծաղիկներ է փնջում, երգեր հիւսում, ենդում ու լալիս։ Դա Անուշն է։ Նա զիշեր ցերեկ արիւնարցունք է թափում Սարօյի շիրմի մօտ։ Դուք համակուում էք իսոր վշտով, տեսնելով ինելակորոյս աղջկայ հոգեկան գալարումներն ու տանջանքները։

Պառաւ նանք փնտոում է աղջկան, բայց նա արդէն Դեբեդի գրկումն է։

Ահա բովանդակութիւնը այս գողոտրիկ պոէմայի, որ վերածուած է օպերայի եւ խաղացուումն է մեր ըեմերի վրայ։ Դա ոչ թէ Անուշի, այլ ամբողջ գիւղի, մի ամբողջ ժողովրդի սրտաշարժ պատկերն է, որ գծուած է գեղարուեստագէտի վարպետ վրձինով։

Իր հիւսուածքով գեղարուեստական մի ամբողջութիւն է “Անուշը”, որի նմանը դեռ չէ երեւցած մեր գրականութեան մէջ։

Մարտ

Գիւղական ցաւուտ պատկերներից մէկն էլ Մարօն է։ Դա մի յուզի դրամա է, ինը տարեկան մի տարաբախտ գեղջկունու սըրտառուց պատմութեան շուրջն է անդրադառնում այդ դրաման, որ գծուած է այնքան յաջող եւ այնքան գեղեցիկ վրձինով։

Բանաստեղծը յիշում է իր մանկութեան ընկեր դժբախտ եւ վաղամեռ Մարօյին, որի հետ նա այնքան խաղացել, “սիրել ու ծեծել”, է այն գիւղում, ուր մարդիկ պաս չեն ուտում, աղօթում են ջերմեռանդ եւ ժամ գնում ամէն օր։

“Բայց միշտ ցաւեր նորանոր,
Միշտ մի աղէտ, մի վընա,
Գալիս են մեզ անպակաս։”

Ահա այդ ցաւերից մէկը։ Ինը տարեկան Մարօյին նշանում են սարերի շոբան կարօյի հետ, որ վիթիարի մի հովիւ էր եւ որի

“Բոյ-բուսաթին նայելիս
Մարդու զարզանդ էր գալիս։”

Մարօն սիրում էր նրան, որովհետեւ իրեն “շամիչ, կանֆետ ու խնձոր”, էր բերում։ Բայց ինչո՞ւ այդքան փոքրիկ հասակում նշանեցին Մարօյին։ Այս մասին բանաստեղծը ոչինչ չի պարզում։ Սակայն նրա լուութիւնը մեր սրտին, մեր հոգուն շատ բան է ասում։ Մարօյի ծնողները չունեւուներ էին։ Նրանք վաղ են ամուսնացնում իրենց աղջկան, որպէս զի մի ուսուղ ըելրան պակասի իրենց տանից։ Այդպէս է գիւղերի դառն իրականութիւնը։ Այդ աշխարհում չունեւուները զոհ են գնում, զոհ տալիս, որպէս զի ունեւուները վայելեն։ Եւ ահա սկսում է սրտառուց դրաման։

“Մեն էլ Կարօն աղմուկով
Եկաւ զունով-թըմբուկով։”

Ու Մարօյին զուզեցին,
Երեսին քող ձըգեցին,

Հինա դրին ծեռքերը...
Եկաւ խաչով տէրտէրը,
Տարաւ ժամում, կանգնեցրեց,
— Տէր ես, որդեալ, հարցրեց:
— Տէր եմ, ասաւ մեր Կարօն,
Հուռ կանգնած էր միշտ Մարօն...,,

Հուռ էր Մարօն, որովհետեւ նա չէր հասկանում, թէ ի՞նչ էր կատարուում իր շուրջը: Եւ այդ սրտածմիկ իրականութեան առջեւ կանգնած է գիւղական ժողովորդը, բայց նա չի բողոքում, չի զայրանում. նա լուռ հանդիսատես է: Հուռ են նոյն իսկ Մարօյի մայրը, ազգականները, բարեկամները: Հուռ է եւ գիւղի քահանան. նա ոչ միայն չի բողոքում անշափահան ամուսնութեան դէմ, այլ եւ իր ծեռքով պսակում է: Բայց վերջը... փոքրիկ նորահարս

“Մարօն ատեց իր մարդուն,
Փախաւ, եկաւ իր հօր տուն:
Եկաւ լացեց նա վշտու,
— Ես չեմ զնալ նըրա մօս,
Ես սիրում եմ մայրիկին,
Ես չեմ ուզում լինել կին...,,

Թումանեան կարողացել է դժբախտ Մարօյի փոքրիկ սիրտը բաց անել եւ ցուցահանել նրա խոր թախիծը, նրա հոգու անհուն վիշտը: Դուք խորապէս զգացուում էք լսելով անմեղ երեխայի աղիողորմ հեծկուանքը եւ յուզուում մինչեւ արտասուր:

Գիւղական “աղաթը”, սակայն չի հնայում նոյնիսկ փոքրիկ երեխային: Հայրը ծեծում է Մարօյին եւ տանից դուրս անում, որպէս զի գիւղական “աղաթը”, “Նահապետական սուրբ աւանդութիւնը”, բարձր մայ:

Յուզիչ եւ սրտաշարժ է Մարօյի կեանքը: Անհուն կարեկցութեամբ լցուում էք դէպի անմեղ փոքրիկը, որ թափառում է մեն-մենակ սոված, պատառուած շորերով. նա երբեմն խղճալի “կուչ է զալիս օտարի

օջաղի շուրջ,, երբեմն թափառում է անտառներում: Ոչ ոք չի խղճում նրան, ոչ ոք չի խնամում նրան: Բոլորն էլ լքում են, բոլորն էլ արհամարում են: Եւ այդպէս տարիներ: Բայց ի՞նչ էր Մարօյի մեղքը, նրա յանցանքը: Ի՞նչ յանցանք կարող էր գործել ինը տարեկան մի երեխայ: Նրա յանցանքը չքաւորութիւնն էր, իսկ նրա մեղքը՝ շզարթնած սէրը: Գիւղի ամբոխը սակայն այդ չի հասկանում եւ դատապարտում է Մարօյին, նախատում է ու անարգում նրան, նախատում է որովհետեւ նա միայն մի գերագոյն սրբութիւն է ճանաչում. դա նրա աւանդական օրէնքը, “աղաթն,, է, որ բարձր է ամեն բանից:

Եւ բոլորից արհամարուած, լքուած, սոված եւ մերկ Մարօն մի օր սարից զցում է երեն ծորը... Սակայն յուզիչ դրաման դրանով էլ չի վերջանում: Նրա անբախտ դին գերեզմանատուն չեն տանում, այլ գիւղից հեռու, մենաւոր մի ուռենու տակ, մի փոս են փորում եւ “առանց ժամ” ու պատարագի,, հողին յանձնում:

Մարօյով խաւար գվլի սրտառուչողը բրգութեան մի պատկերն է գծուած, գիւղի աւանդական հասկացողութեան թըշտառ զո՞ն է պատկերացուած, այնքան քնական, կենդանի եւ վարպետ վրձինով, որ դուք, կարծես, չէք կարդում պոէմի մէջ, այլ տեսնում էք կեանքում տարաբախտ Մարօն, լսում էք նրա աղիողորմ, դասն հեծկուանքը, ապրում էք այդ փոքրիկ սրտի թախծոտ խոհերով եւ տանջանքներով:

3. Լեգենդները:

Թումանեանի լեզենդները գեղջկական-ժողովրդական գողտրիկ ստեղծագործութիւններ են: Նա իր գեղարուեստագէտի վարպետ վրձինով մշակել, կոկել եւ կեանք է տուել գեղջկական աւանդութիւններին եւ հայ գրականութեան համար կառուցել մի-

մի թանկագին լեզենդներ: Նրանց մէջ գեղջուկ, ուամիկ ժողովուրդն է խօսում, գիշական կեանքի բնորոշ երեւյթներն են հանդէս գալիս, մարդկանց այլաբանական պատկերներն են զծուում: Ահա աննամդւա մարդը, չար ու խորամանկ կատուի կերպարանքով: Ահա մերկ ու տկլոր նամնաւառը, չլչիկի երեւյթով, որ ամօթից փախչում է մարդկանցից: Ահա անբարեխիղ վաշխառուն, փշի տենքով, որից փախչում են ամենքը: Ահա ստրուկ հարսը, յօպոպի կերպարանքով, որ տառապում է պառափի ծեռքում: Ահա դժբախտ որբերը, թըռչունի երեւյթով, որոնք մնացել են անճար եւ անտիրական: Ահա երկու սիրակէզ սրտերը, երկու թիթեռնիկները, որոնք զոհուում են չար մարդկանց դաւադրութեամբ: Եւ այսպէս մարդիկ կեղծում են, դաւում, խաբում, տանջուում, տառապում, զալարուում եւ լալիս: Եւ այդ բոլորը բանաստեղծը զծել է մեր աչքերի առաջ այնպէս, ինչպէս ըմբռնել էին մեր նախնիքները:

4. Սասունցի Դասիթը:

Գեղջուկների հաւաքական ստեղծագործութիւնը նիւթ է դարձրել “Սասունցի Դասիթ” ով: Նա գեղարուեստական նոր որդի, նոր շունչ տուեց ժողովրդական այդ էպոսին: Այստեղ նա պաշտպան է հանդիսանում հողի, գութանի հերոս մշակներին, փառաքանում նրանց աշխատանքը, վար ու ցանքը, քարոզում խաղաղ ու հաշտ կեանք եւ բողոքում թուր ու կայծակի, պատերազմի դէմ:

Ստեղծագործող, աշխատող, արտադրող ժողովուրդը խաղաղ ու հաշտ կեանք է տենչում: Բայց ովքեր են սրբազան խաղաղութիւնը վրդովում եւ ժողովրդի կեանքը ալեկոծում: Թագաւորներն ու իշխանները: Նրանք աշխատաւոր ժողովրդի զաւակներից բռնի ուժով իմում են իրենց

օջախներից, պատերազմի դաշտ առաջնորդում, չէն քաղաքներն ու գիւղերը աւերում, հանդ ու դաշտերը ժողովրդի արիւնով ծածկում, հազար-հազար տան ճրագները հանգցում, հազար ու մի վէրքեր բանում ժողովրդի սրտի վրայ: Ահա այս դառն եւ յուզիչ ողբերգութեան դէմ է բողոքում թումանեան “Սասունցի Դասիթով”:

Ի՞նչ են արել քեզ էս մարդիկ,
Հէր ես սըրանց դու կոտորում:
Ամեն մենը մի մօր որդի,
Ամեն մենը մի տան ճըրագ,
Որը կինն է թողել էնտեղ
Աչքը ճամքին, ինեղն ու կրակ,
Որը մի տուն լիք մանուկներ,
Որը մընող աղքատ ու ծեր,
Թագաւորը զօրով թըրով
Հաւաքել է էստեղ քերել,
Խեղճ մարդիկ ենք պակաս օրով,
Մենք քեզ միաս ի՞նչ ենք արել:
Թագաւորն է քո թըշնամին,
Կըոփի ունիս, իր հետ արա,
Հէր ես քաշում թուր-կայծակին
Էս անճարակ խալիսի վըրայ:

Սա մի բողոք է համամարդկային կեանքի ամբողջ ընթացքի դէմ եւ միաժամանակ սրտառուչ դարձ դէպի գեղջուկ ժողովուրդը:

Դուք ըռանչպար մարդիկ, ասաւ,
Զուրկ ու խաւար, քաղցած ու մերկ,
Հազար ու մի կըրակ ու ցաւ,
Հազար ու մի հոգսեր ունէք:
Ի՞նչ էք առել նետ ու աղեղ,
Եկել թափել օտար դաշտեր.

Զէ՞ որ մենք էլ ունինք տուն տեղ,
Մենք էլ ունինք մանուկ ու ծեր...
Զանձրացել էք խաղաղ ու հաշտ
Հողագործի օր ու կեանքից,
Թէ՞ զըզուել էք ծեր հանդ ու դաշտ,
Զեր հունծ ու փունչ վար ու ցանքից...

Այսքանն էլ բաւական է գաղափար տալու համար Թումանեանի բանաստեղծական տաղանդի վրայ: Մենք վերցրինք նրա քնարի բնորոշ լարերը, ցոյց տալու համար թէ նա ինչքան քաջ տեղեակ է գիւղական կեանքին եւ թէ ինչպիսի վարպետ վրձինով է նկարել գիւղական աշխարհը:

Լեզուական տեսակէտից Թումանեան նոյնպէս բարձր է կանգնում: Աշխարհիկ լեզուի գարզացման գործում նա որոշ դեր կատարեց եւ այդ տեսակէտից Աբովեանի, Պոշեանի եւ Աղայեանի շարքում գրաւում է իր պատուաւոր տեղը:

Նրա լեզուն պարզ է, ժողովրդական եւ ընտիր. ոճը սահունէ, հարուստ եւ պատկերաւոր:

V.

Թումանեանի դեր:

Յով. Թումանեանը հայ նորագոյն բանաստեղծութեան վետերանն էր: Նա ամբողջ քառորդ դար հնէցրեց իր քնարը: Այդ երեսուն տարիների երկարատեւ ընթացքում նա մեր գրականութեան եւ մասնաւրապէս մեր բանաստեղծութեան անգնահատելի ծառայութիւն մատուցեց:

Նա առաջինն էր, որ իր երգերով հայ քնարերգութեան մէջ ժողովրդական իսկական տարր մոցը եւ բանաստեղծութիւնը կապեց կեանքի ու ժողովրդի հետ: Այդ տեսակէտից նա ինքնուրոյն է եւ կանգնած է առանձնակի:

Նա առաջինն էր, որ իր քնարն նուիրեց հայ գիւղին, հայ զեղջուկին եւ մեր բանաստեղծական գրականութեան մէջ հիմք դրեց մի նոր բանաստեղծութեան գիւղական քնարերգութեան, որը զարգացրեց, կատարելագործեց եւ հանդիսացաւ նրա լաւագոյն արտայայտիչը:

Իբրև գիւղի երգիչ նա ձգտեց զեղ-

ջուկ ժողովրդի ինքնազիտակցութեան իդէաին եւ այդ գաղափարի իրականացման համար. ամբողջ քառորդ դար, իր հերոսներով, կոիւ մղեց գիւղական տիրող այն նախապաշարումների եւ աւանդական կաշկանդումների դէմ, որոնք ստրկացնում էին գիւղացուն, որոնք թշնամի էին նրա երջանկութեան ու ազատութեան:

Գիւղական քնարերգութիւնով Թումանեան առաջ ըերեց մի ամբողջ շկոլա եւ նշանակելի ազդեցութիւն ունեցաւ մեր երիտասարդ գրողների վրայ: Նրա անմիջական ազդեցութեան ներքոյ յայտնուեց Վահան Միքաղեանն իր “Հալւարի որսը”, պոէմայով:

Նոյնպէս Թումանեանն էր, որ, Աղայեանից յետոյ, մեր ժողովրդական ստեղծագործութեան զեղցիկ գանձերը զեղարուեստագէտի վարպետ վրձինով մշակեց, կենդանացրեց եւ նոր շունչ ու հոգի տուեց:

Նոյնպէս նա էր, որ իր բանաստեղծական խոշոր տաղանդի ոյժով հայ բանաստեղծութիւնն ու լեզուն նրբացրեց, զեղցկացրեց, ազնուացրեց եւ դրեց զեղարուեստական բարձրութեան վրայ:

Թումանեանի արժէքաւոր ծառայութիւններից մէկն էլ կայանում է նրանում, որ նա զարկ տուեց մեր մանկական գրականութեան: “Հասկեր,, մանկական հանդիսանութիւն մանկական հանդիսանութիւն նաև մանկական մի շարք գորտիկ պատմուածքներ, որոնք խօսում են մանուկների սրտերի եւ հոգիների հետ: Խոկ նրա ջանքերով կազմուած “Հուսաբեր,, մանկական դասագրքերը մեր մանկական գրքերի շարքում պատուաւոր տեղ են գրաւում:

Ահա այն դերը, որ Թումանեան մատուցել է հայ զրականութեան եւ նամանաւանդ հայ բանաստեղծութեան եւ հայ զեղջուկ ժողովրդին:

Նա զերեզման իջաւ մի այնպիսի ժամանակ, երբ նրա բանաստեղծական տաղանդը արդէն հասել էր իր զարզացման աստիճանին, երբ նրա քնարը քնարական

նորանոր արժէքներ պիտի արտադրելու: Բայց այն ինչ նա թողել է, ինչ նա կատարել է, ինչ նա ստեղծել է տարիների անդուլ աշխատանքով՝ բաւական է, որ նա անմահանայ:

Նրա անունն արդէն ժողովրդականացել է եւ ապրում է ամենուրեք հայ ժողովրդի սրտում:

Եւ նա պիտի ապրի յաւիտեան, որով հետեւ, նա պատկանում է այն մեծութիւններին, որոնց անունները մի մի յուշարձաններ են եւ որոնց յիշատակը դարերն ու հանգամանքները չեն կարող ոչնչացնել:

Նա այն մշակներիցն է, որոնք պատկանում են ոչ թէ միայն մի ազգի, այլ ամքողջ մարդկութեան. որովհետեւ նրանց ստեղծագործութիւնները ներշնչուած են հանրամարդկային զգացումներով ու ըլլենում են մարդկութեան հոգուց:

Վիճակ, 17 Ապրիլ 1923: Մասմ ԵՐՍՄԵԱՆ



ԿՈՄԻՏԱՍ ԱՅՐԻ ՊԱՊԵՏ

(ՀՅՈՒՅՆԻ ԱԿԱԴԵՄԻԱ)

III.

Գործունէութիւն:

—

Ա. Դասախոսութիւններ - Համերգներ:

Վերեւում մենք ասացինք որ Կոմիտաս վարդապետը եղել է նաեւ համերգների կաղմակերպիչ, կապէլմայստէր եւ դասախոս միաժամանակ: Թէ հայաշատ վայրերում եւ թէ Եւրոպայի նշանաւոր կենդրոններում նա տուել է դասախոսութիւնների եւ համերգների մի շարք, որոնք ամենուրեք վերջացել են մեծ յաջողութեամբ:

Ի՞նչ էր նպատակը այդ համերգների եւ դասախոսութիւնների: Ծանօթացնել մեզ եւ օտարներին հայ ժողովրդական եւ հոգեւոր երաժշտութեան հետ եւ ցոյց տալ, երեւան հանել հայ սրտի եւ հոգու ինքնուրոյն ստեղծագործութիւնները:

Այստեղ մենք ոչ մէկ խօսք չպիտի ամենք նրա կազմակերպած երկրորդական նշանակութիւն ունեցող համերգների եւ դասախոսութիւնների մասին. զա մեզ կը տանէր շատ հեռու: Մենք բաւականանում ենք յիշատակել միայն առաջնակարգ արժէք ունեցող համերգներ եւ դասախոսութիւններ, բերելով կարծիքներ մի քանի ծանօթ քննադատներից:

Կոմիտաս վարդապետի իսկական արժեքը ցոյց տալու եւ նրա արուեստը ծանօթացնելու մտադրութեամբ, մենք պիտի յիշատակենք նոյնպէս օտար երաժշտագէտների կարծիքները:

Իր առաջին դասախոսութիւնը նա կարգել է Բերլինում:

1899 թուին, «Միջազգային երաժշտական ընկերութեան» սրահում — որի հիմնադիր անդամներից մէկն էլ ինքն է եղել — կարդացել է մի դասախոսութիւն: Դասախոսութեան ներկայ են գտնուել պրոֆէսորներ, երաժշտագէտներ, հայ եւ գերմանացի ու սանողներ:

Այդ երեկոյ նա խօսել է հայ կրօնական եւ ժողովրդական երգերի մասին:

Միջազգային երաժշտական ընկերութեան նախագահ եւ Բերլինի համալսարանի երաժշտութեան պրոֆէսոր Փլայչէրը դասախոսութիւնից առաջ հետեւեալ է ասել. —

«Առաջին¹ անդամն է, որ Բերլինում այսպիսի մի դասախոսութիւն է կարդացուում եւ գուցէ մինչեւ այժմ Պարիսի աշխարհականներում անդամ այդ տեսակ դասախոսութիւն չի կարդացուել»:

¹ Ա. Եղիգար, «Հայկական երաժշտութիւնը Բերլինում», Նոր դար, 1899, երես 115: